



Բիզնեսի սխալ կազմակերպումն ու կառավարումը հանգեցնում է տնտեսական գործունեության ցածր եկամտաբերության, իսկ երբեմն նաև վնասով աշխատանքի, որի արդյունքում կազմակերպությունները չեն կարողանում դիմագրավել տնտեսության զարգացման ներկա փուլում առաջացող մարտահրավերներին: Իրադարձությունների նման զարգացումը պահանջում է այնպիսի միջամտություն, որը կարող է ապահովել տնտեսության կայուն կառավարումը: Նման իրավիճակներում տնտեսության կառավարման կարևորագույն գործիքներից մեկը հանդիսանում է սնանկության գործընթացը:

Փորձենք պարզել Իրավաբանական անձանց սնանկության վարույթի առանձնահատկությունները:

### **Ի՞նչ է սնանկությունը**

Ընդհանուր առմամբ սնանկությունը օրենքով նախատեսված և դատարանի վճռով վրա հասնող իրավական հետևանք է այն դեպքում, երբ պարտապանը ի վիճակի չէ բավարարել պարտատերերի պահանջները: Մնանկության հիմնական նպատակը՝ պարտապանին առողջացնելն է, որի իրագործման կարևորագույն պայմանն է պարտապանի և պարտատերերի իրավունքների և օրինական շահերի հավասարակշռված պաշտպանությունը: Պարտապանի առողջացումն իրականացվում է վերջինիս համար որոշակի պայմաններ ստեղծելու և արդյունքում տնտեսական գործունեությունը խթանելու միջոցով, որի անհնարիության դեպքում սնանկության վարույթի առաջնային խնդիրն է անարդյունավետ և անկայուն գործունեություն ծավալող ձեռնարկությունների լուծարումը և վերջիններիս հեռացումը բիզնեսից՝ տնտեսության համար ոչ մեծ կորուստներով:

Մնանկությունը կարող է լինել հարկադրված, կամավոր, կանխատեսվող և կանխամտածված: Իսկ «Մնանկության մասին» ՀՀ օրենքում 2016 թվականին կատարված փոփոխություններով ներդրվել է սնանկության վտանգի ինստիտուտը, որի վերաբերյալ մանրամասն անդրադարձել ենք **03.06.2020 թվականի «Մնանկության վտանգը որպես ճգնաժամային իրավիճակում առաջացող մարտահրավերների հակազդող օգտակար միջոց»** հրապարակմամբ:

**Ո՞րոնք են սնանկության հատկանիշներն ու վարույթի հարուցման առանձնահատկությունները**

Սնանկության վարույթը կարող է հարուցվել հարկադրված սնանկության դիմում կամ կամավոր (սեփական նախաձեռնությամբ) սնանկության դիմում ներկայացնելու միջոցով:

Հարկադրված սնանկության դիմում կարող է ներկայացվել մեկ կամ մի քանի պարտատերերի կողմից: Հարկադրված սնանկության դիմումի հիման վրա Դատարանի վճռով պարտապանը կարող է սնանկ ճանաչվել ստորև ներկայացված հատկանիշների միաժամանկյա առկայության դեպքում.

- Եթե առկա է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը (1,000,000.00 ՀՀ դրամ) գերազանցող պարտավորություն,
- Վճարային պարտավորությունը անվիճել է,
- 1,000,000.00 ՀՀ դրամ գումարը գերազանցող վճարային պարտավորությունը կետանցվել է 60-օրյա կամ ավելի ժամկետով: Ընդ որում՝ վճռի կայացման պահին նշված կետանցը պետք է շարունակվի:

Կամավոր սնանկության դիմում կարող է ներկայացվել պարտապանի կողմից: Կամավոր սնանկության դիմումի հիման վրա Դատարանի վճռով պարտապանը կարող է սնանկ ճանաչվել ստորև ներկայացված հատկանիշների առկայության դեպքում.

- Եթե հաշվապահական հաշվառման կանոնների հիման վրա կատարված գնահատման արդյունքների հիման վրա իրավաբանական անձի պարտավորությունները 1,000,000.00 ՀՀ դրամ գումարի չափով գերազանցում են իր ակտիվների արժեքը,
- եթե հաշվապահական հաշվառման կանոնների հիման վրա կատարված գնահատման արդյունքների հիման վրա իրավաբանական անձի հանրային իրավական դրամական պահանջներով կատարման ենթակա պարտավորությունները (Հարկեր, պարտադիր վճարներ, տուրքեր կամ այլ նման պարտավորություններ) գերազանցում են պարտապանի ակտիվների արժեքը:

Առանձին հիշատակման կարիք ունեն կանխատեսվող և կանխամտածված սնանկությունները: Առաջին դեպքում պարտապանը իրավունք ունի դիմելու կանխատեսվող սնանկության այն դեպքում, երբ ակնհայտ է, որ ապագայում առաջանալու են կամավոր սնանկության հիմքերը, իսկ երկրորդ դեպքում՝ սնանկությունը համարվում է կանխամտածված, եթե այն վրա է հասնում իրավաբանական անձին վերահսկող անձանց (տնօրեն, մասնակից, բաժնետեր և այլն) մեղքով: Նման արարքը քրեորեն պատժելի է համարվում, եթե պարտապանին կամ պարտատերերին պատճառվել է խոշոր վնաս: Բացի այդ՝ կանխամտածված սնանկության համար մեղավոր անձինք պարտատերերի առջև կրում են պատասխանատվություն իրենց

գույքով, եթե պարտապանի (իրավաբանական անձի) գույքը չբավարարի պարտատերերի դեմ պարտավորությունները մարելու համար:

**Ո՞րոնք են տնտեսության կայուն կառավարման համար իրավաբանական անձի սնանկության վարույթում կիրառվող միջամտությունները**

Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից՝

1. արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի կողմից իր ցանկացած պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը, բացառությամբ պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված դեպքերի,

2. դադարում է պարտապանի վճարային, ներառյալ՝ հարկերի, տուրքերի այլ վճարների գծով պարտավորությունների նկատմամբ տոկոսների հաշվարկումը, ինչպես նաև այդ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար ցանկացած տեսակի տույժերի, տոկոսների և տուգանքների հաշվեգրումը,

3. կարճվում կամ ավարտվում են պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական, վարչական կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում գտնվող գործերը, և պարտապանի դեմ պարտատերերի պահանջները կարող են ներկայացվել սնանկության վարույթի շրջանակներում՝ սույն օրենքով սահմանված ժամկետներում և կարգով,

4. կարճվում է պարտապանի վերաբերյալ հայցի ապահովման, բռնագանձման և այլ բնույթի ցանկացած կատարողական վարույթ, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի,

5. վերանում են պարտապանի գույքի վրա դրված արգելանքներն ու սահմանափակումները:

Վերոգրյալից հետևում է, որ պետության կողմից անմիջական ներագդեցության միջոցով պարտապանի համար ստեղծվում են որոշակի պայմաններ ընկերության ֆինանսական առողջացման և կարգապահության բարձրացման համար, որի արդյունքում սնանկ ճանաչված ըկերության բոլոր պարտավորական հարաբերություններից բխող պարտատերերի պահանջները կենտրոնացվում են մեկ վարույթի շրջանակներում և վերջինիս հնարավորություն է ընձեռվում օրենքով սահմանված կարգով կատարելու պարտատերերի հանդեպ ստանձնած պարտավորությունները: Իսկ սնանկության վարույթի շրջանակներում պարտավորությունների կատարման կարևորագույն գործիքներից է առողջացման ծրագրի ներկայացումը, որով վերջինիս համար հնարավորություն է ընձեռվում ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու միջոցով իրականացնելու շահութաբերություն չապահովող գործունեության դադարեցումը և ձեռնարկատիրական գործունեության ոլորտի փոփոխություն, անշահավետ գործարքների փոփոխում կամ դադարեցում, պարտքի վերակառուցում (պարտքի մարման ժամկետների հետաձգում, վերաձևակերպում, պարտավորությունների կատարումից ազատում), նոր բաժնետոմսերի թողարկում կամ հետգնում, ինչպես նաև նոր ներդրումների և/կամ վարկային միջոցների ներգրավում և այլն:

Սնանկ ճանաչված իրավաբանական անձի ֆինանսական առողջացումը հանդիսանում է շահավետ նաև վերջինիս առողջացման ծրագրի շրջանակներում ներդրում կատարած տնտեսվարողների համար, քանի որ պարտապանին ֆինանսավորում իրականացրած

պարտատիրոջ պահանջները բավարարվում են առաջնահերթության կարգով, Օրինակ՝ պարտապանի սնանկության վարույթում ֆինանսավորում իրականացրած Բանկի, վարկային կազմակերպության կամ այլ ներդրողի պահանջը գերակա է մնացած բոլոր պարտատերերի պահանջներից, ինչն էլ տնտեսական առումով կարող է դիտվել շահավետ ֆինանսավորողի համար զուտ այն հիմնավորմամբ, որ վերջինիս պահանջի բավարարման առաջնահերթությունն ու գերակայությունը սահմանված է օրենքով և բավարարվում է ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման ընթացքում պարտապանի գործունեությունից ստացած զուտ շահույթից (զուտ եկամտից), եթե այլ բան նախատեսված չէ պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրով կամ ֆինանսավորողի և պարտատերերի գրավոր համաձայնությամբ:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ֆինանսական առողջացման ծրագիր կարող են ներկայացնել պարտապանը, կառավարիչը, ապահովված պահանջների առնվազն 1/3-ին տիրապետող պարտատերերը, չապահովված պահանջների առնվազն 1/3-ին տիրապետող պարտատերերը, ինչպես նաև պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայտահավաք) կապիտալի առնվազն 1/3-ին տիրապետող անձինք: Ֆինանսական առողջացման ծրագիրը պետք է ներկայացվի մինչև պարտատերերի առաջին ժողովը:

Ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետը չի կարող գերազանցել 36 ամիսը, եթե օրենքով սահմանված կարգով դրա գործողության ժամկետը չի երկարաձգվել: Ֆինանսական առողջացման ծրագրի գործողության ժամկետը դատարանի կողմից կարող է երկարաձգվել մինչև 12 ամիս ժամկետով, իսկ Ֆինանսական առողջացման ծրագրի ընդհանուր տևողությունը դատարանի կողմից դրա սկզբնական հաստատումից հետո չի կարող գերազանցել 72 ամիսը, իսկ սկզբնական հաստատվող ֆինանսական առողջացման ծրագրի տևողությունը չի կարող գերազանցել 36 ամիսը:

**Ի՞նչ հետևանք է վրա հասնում իրավաբանական անձի սնանկության վարույթում առողջացման անհնարինության դեպքում**

Իրավաբանական անձի կողմից ֆինանսական առողջացման ծրագիր չներկայացվելու կամ ներկայացված առողջացման ծրագիրը չհաստատվելու, ինչպես նաև հաստատված առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարման դեպքում սկսվում է ընկերության լուծարային գործընթացը:

Պարտապան ընկերությանը լուծարելու մասին որոշման հրապարակումից հետո կառավարիչը օրենքով սահմանված կարգով իրականացնում է պարտապանի գույքի վաճառքը: Պարտապանի գույքի վաճառքը իրականացվում է դատարանի որոշման հիման վրա՝ հրապարակային սակարկությունների կամ ուղղակի գործարքի միջոցով: Դատարանի որոշման հիման վրա արգելադրվում է պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքը, բացառությամբ այն գույքի, որի վրա, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, բռնագանձում չի կարող տարածվել: Դատարանի որոշմամբ կասեցվում են պարտապանի գույքը կառավարելու կամ տնօրինելու բոլոր իրավունքները:

Իրավաբանական անձին սնանկ ճանաչելուց հետո՝ մինչև նրա վերաբերյալ լուծարելու մասին որոշում ընդունելը, պարտապանի ղեկավարը գործում է կառավարչի համաձայնությամբ և նրա հսկողության ներքո: Պարտապանի ղեկավարին արգելվում է պարտապանի գույքը տնօրինելու կամ պարտապանի համար գույքային պարտավորություն առաջացնող ցանկացած գործողություն կատարել առանց կառավարչի թույլտվության: Պարտապանին պատկանող

գույքի տնօրինումը նրա լուծարման մասին որոշում կայացնելուց հետո իրականացնում է կառավարիչը: Պարտապանի ղեկավարը լուծարումից հետո գրկվում է գույքը տնօրինելու և կառավարելու իրավունքներից:

Ընկերության լուծարման արդյունքում վեջինիս պատկանող և ի ապահովումն վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով գրավադրված գույքերի իրացման արդյունքում հավաքագրված դրամական միջոցների բաշխման արդյունքում կատարվում են պարտատերերի հանդեպ ստանձնած պարտավորությունները:

Այսպիսով՝ սնանկության գործը կարող է ունենալ երկու զարգացում՝ իրավաբանական անձի լուծարում կամ ֆինանսապես առողջացում: Ընդ որում սնանկ ճանաչված իրավաբանական անձը համարվում է ֆինանսապես առողջացած և կարող է շարունակել իր գործունեությունը՝ սնանկության վարույթի շրջանակներում դատարանի կողմից հաստատված ֆինանսական առողջացման ծրագրի հաջող կատարման արդյունքում: Միաժամանակ առողջացած անձն ազատվում է բոլոր այն պարտավորություններից, որոնցից բխող պահանջները չեն ներկայացվել սնանկության ավարտված գործի շրջանակներում՝ բացառությամբ օրենքով սահմանված որոշ դեպքերի:

Թե՛ առաջին, թե՛ երկրորդ դեպքում էլ սնանկ ճանաչված իրավաբանական անձը չի ազատվում այն պարտավորությունների կատարումից, որոնցից բխող պահանջները չեն ներկայացվել սնանկության ավարտված գործի շրջանակներում, եթե սնանկության գործն ավարտվել է սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

### **Ի՞նչ անել**

1. Հաշվապահական հաշվառման կանոնների հիման վրա իրականացնել տնտեսվարող սուբյեկտի պարտավորությունների և ակտիվների հարաբերակցության, վերջինիս սնանկության հատկանիշների և կանխատեսումների գնահատում,
2. Իրավաբանների և ֆինանսական մասնագետներ ներգրավմամբ մշակել առողջացման ծրագիրն ու ռազմավարությունը,
3. Համապատասխան մասնագիտացում ունեցող իրավաբանի ղեկավարմամբ վարել տնտեսվարող սուբյեկտի սնանկության ի վարույթը և իրականացնել վերջինիս շահերի պաշտպանությունը: